Գերմանիայի
Դաշնային Հանրապետության
դեսպանություն
Երևան

ՍՊՈՐՏ/ՄՇԱԿՈՒՅԹ

Գերմանիա, Բելգիա, Լյուքսեմբուրգ, Շվեդիա

Դիմում ներկայացնելու փաստաթղթերը

Դիմում ներկայացնելու համար անհրաժեշտ է **ձեռք բերել պայմանավորվածություն**: Պայմանավորվածություն կարող եք ձեռք բերել **միայն առցանց (օնլայն)**: Օնլայն-հերթագրման համակարգ կարող եք մուտք գործել դեսպանության կայքէջի միջոցով՝ www.eriwan.diplo.de :

Դիմում հանձնելիս անհրաժեշտ է անձամբ ներկայացնել ստորև նշված փաստաթղթերը:

Բոլոր այն փաստաթղթերը, որոնք գերմաներեն կամ անգլերեն չեն, պետք է ներկայացնել ոչ նոտարական թարգմանությամբ:

Փաստաթղթերը պետք է ներկայացնել նշված հերթականությամբ դասավորած: Բոլոր փաստաթղթերի պատճենները անհրաժեշտ է ներկայացնել **A4 ֆորմատի թղթի վրա**: **Դեսպանությունը խնդրում է փաստաթղթերը չդնել թափանցիկ կամ այլ թղթապանակների մեջ, չկարել, չամրացնել:** Դեսպանություն հասցեագրած ֆաքսերը և գրությունները չեն տեսակավորվում, չեն դասավորվում:

Գործերը պետք է հանձնել ամբողջական՝ ներկայացնելով հուշաթերթիկում նշված բոլոր փաստաթղթերը: Գործերը կընդունվեն և կքննվեն այնպես, ինչպես դրանք կներկայացվեն ամրագրման օրը: Որոշումը կկայացվի ըստ առկա փաստաթղթերի: Հավելյալ փաստաթղթեր ներկայացնել հիմնականում հնարավոր չէ: **Դեսպանությունը խնդրում է համոզվել, որ գործ հանձնելու համար առկա են անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը**:

Դեսպանությունը նշում է, որ, համաձայն Կացության մասին օրենքի §82-ի, յուրաքանչյուր դիմող պարտավոր է ապահովել դիմումի լիարժեքությունը, որևէ փաստաթղթի բացակայության դեպքում դեսպանությունը համարում է, որ այն չի կարող ներկայացվել: Առանձին դեպքերում, սակայն, դեսպանությունն իրեն իրավունք է վերապահում պահանջել լրացուցիչ փաստաթղթեր:

Լիարժեք դիմում ներկայացնելը վիզա ստանալու համար դեռևս բավարար հիմք չէ:

Հայաստանի քաղաքացիների համար այցագրի վճարը որպես կանոն կազմում է 35 եվրո: **Այն պետք է մուծել փաստաթղթերը հանձնելիս՝ համարժեք ՀՀ դրամով:** Մինչև 12 տարեկան երեխաների համար այցագրի վճար չի գանձվում:

Վիզաների վճարներից ազատվելու մասին տեղեկությունները տես հղում:

Անհրաժեշտ փաստաթղթեր

- ☐ գերմաներենով կամ անգլերենով, լիարժեք լրացրած դիմում-հարցաթերթիկ: Այն կարող եք գտնել մեր ինտերնետային էջում՝ Videx-Antragsformular
- ☐ 2 նոր, բիոմետրիկ լուսանկար, մեկը խնդրում ենք սոսնձել դիմում-հարցաթերթիկին (մյուսը կվերադարձվի հարցազրույցից հետո)
- ☐ բժշկական ապահովագրության վկայագիր շենգենյան բոլոր երկրների համար, մեկ պատճեն: Ապահովագրական գումարը պետք է կազմի 30.000 եվրո
- ☐ գործող ճամփորդական անձնագիր, որը պետք է վավերական լինի վիզայի վերջնաժամկետի ամսաթվից հետո ամենաքիչը երեք ամիս: (Անձնագրում պետք է լինի առնվազն երկու դատարկ էջ, իսկ վավերականության ժամկետը չպետք է գերազանցի 10 տարին)
- ☐ ճամփորդական անձնագրի տվյալների էջի, ինչպես նաև բացառապես այն էջերի պատճենները, որոնց վրա կան Շենգենյան վիզաներ և դրանց հետ կապված մուտքի և ելքի կնիքներ

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով:

Կոնտակտային ընթացիկ տվյալները, ինչպես նաև հեռախոսազանգերի ժամանակացույցը կարող եք գտնել կայքում. https://eriwan.diplo.de/

- այլ քաղաքացիություն ունենալու դեպքում՝ Հայաստանում օրինական բնակության իրավունքի ապացույց, օր՝. կացության իրավունք, որը վավերական կլինի ԵՄ անդամ պետությունից պլանավորած վերադարձի օրվանից հետո ամենաքիչը երեք ամիս
- հյուրընկալող կազմակերպության կողմից հրավեր, **բնօրինակը** և մեկ պատճեն: Հրավերում պետք է նշված լինի, արդյո՞ք հրավիրողը ստանձնում է ապրելու և կացության ծախսերը:
- եթե հրավիրողը չի հոգում ծախսերը, ապա ուղարկող կազմակերպությունից ծախսերը ստանձնելու վերաբերյալ գրություն, ինչպես նաև բավարար ֆինանսների մասին ապացույց (վերջին երեք ամիսների բանկային հաշվի քաղվածքը)
- դիմողի՝ Հայաստանում ունեցած տնտեսական և սոցիալական կապերի, ինչպես նաև պլանավորած այցի տևողության ընթացքում ապրելու միջոցների մասին ապացույց, մասնավորապես
  - ապացույց դիմողի զբաղվածության վերաբերյալ՝ տեղեկանք ուսման վայրից, ապացույց կենսաթոշակի վերաբերյալ, աշխատավարձի նշումով աշխատավայրից տեղեկանք: Չաշխատելու դեպքում՝ այլ ապացույցներ ապրուստի միջոցների վերաբերյալ (օր.՝ ամուսնու/կնոջ, ծնողների կամ երեխաների աշխատավայրերից տեղեկանքներ)
  - բանկային **հաշվի քաղվածք** (ո'չ տեղեկանք)՝ վերջին երեք ամիսների համար, առկայության դեպքում նաև աշխատավարձային հաշվի քաղվածքը: **Անհրաժեշտ է, որ դիմումատուն որևէ կերպ ընդգծի/նշի աշխատավարձի մուտքերը**
  - Եթե աշխատավարձի/եկամուտի մուտքը չի երևում բանկային հաշվի քաղվածքից. Հարկային տեղեկանք, վարձու աշխատողների համար՝ դիմումատուի հարկային տեղեկանքը, անհատ ձեռներեցների համար՝ ընկերության / ձեռնարկության հարկային տեղեկանքը
  - գույքի սեփականության վերաբերյալ ապացույց (մեքենա, բնակարան կամ այլ անշարժ գույք) բնօրինակը և մեկ պատճեն
  - Առաջին անգամ դիմում ներկայացնելիս, կամ եթե վերջին 3 տարում Շենգենյան գոտի չեք այցելել. ամուսնու/կնոջ անձնագրի բնօրինակը և պատճենը, ամուսնության (ամուսնալուծության, մահվան) վկայականը և պատճենը, ինչպես նաև երեխաների անձնագրերի բնօրինակները և պատճենները, անձնագիր չունենալու դեպքում՝ ծննդյան վկայականների բնօրինակները և պատճենները:
  - երեխաների, ծնողների արտերկրում (նաև Ռուսաստանում) գտնվելու դեպքում՝ այդ մասին ապացույց, օր.՝ տեղեկանք գրանցման վերաբերյալ կամ կացության իրավունքի պատճենը
- անչափահաս դիմողների դեպքում՝ ծննդյան վկայականի պատճենը: Ծնողների համաձայնությունը՝ նոտարական վավերացրած թարգմանությամբ և մեկ պատճեն: Մեկ ծնողի հետ անչափահասի ճամփորդության դեպքում՝ մյուս ծնողի համաձայնությունը՝ նոտարական վավերացրած թարգմանությամբ և մեկ պատճեն:

Դեսպանությունը չի համագործակցում որևէ տուրիստական ընկերության հետ: Դա վերաբերում է նաև դեսպանության անմիջական հարևանությամբ գտնվող ծառայություններ մատուցող գրասենյակներին: Հակառակ պնդումները չեն համապատասխանում իրականությանը:
Ոչ ոք չի կարող ազդել Ձեր դիմումի հաջողության հեռանկարի վրա, քանի որ դիմումների վերաբերյալ որոշում է կայացնում բացառապես գերմանացիներից բաղկացած անձնակազմը: **Եթե Ձեզ այլ բան են խոստանում, անմիջապես տեղեկացրեք մեզ:**

Այս հուշաթերթիկի բոլոր տվյալները հիմնված են այն գրելու պահին դեսպանության ունեցած տեղեկությունների և վերլուծությունների վրա, ուստի դեսպանությունը չի կարող երաշխավորել հուշաթերթիկի լիարժեքությունն ու ճշգրտությունը հատկապես ընթացիկ փոփոխությունների պատճառով: